ԼԵՆԻՆԳՐԱԴԻ, ԿՈՒՐՍԿԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վոլոդյա Գասպարյան

Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղած Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմում (1941-1945 թթ.) տարած հաղթանակում ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին իր արժանի ավանդն է ներդրել նաև հայ ժողովուրդը: Այդ պատերազմին, ընդհանուր առմամբ, մասնակցել են ավելի քան 600 000 հայեր, որոնցից շուրջ 300 000-ը Խորհրդային Հայաստանից, ավելի քան 200 000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, շուրջ 100 000 արտասահմանյան մի շարք երկրներից: Ավելի քան 200 000 հայեր զոհվել են պատերազմում[1]: Հայ ժողովրդի զավակներն իրենց հերոսական սխրանքներով և մարտական ունակություններով աչքի են ընկել բոլոր ճակատամարտերում, նպաստել գերմանաֆաշիստական զավթիչների ջախջախմանը և դրանով իսկ Հայաստանը փրկել մի նոր էլ ավելի կործանիչ եղեռնից: Հիշեցնենք, որ 1941-1942 թթ. Գերմանիայի փաստական դաշնակից Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա և հարմար առիթի էր սպասում այնտեղ ներխուժելու համար: Այդ առումով էլ հայ պատմագրությունը մեծ ուշադրություն է դարձրել Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի ներդրած ավանդի հիմնահարցի լուսաբանմանը: Հայ պատմաբանները իրենց աշխատություններում ոչ միայն լուսաբանել են այդ հիմնահարցը ընդհանրապես, այլև առանձին-առանձին անդրադարձել պատերազմի գլխավոր ճակատամարտերին հայերի մասնակցության հիմնահարցին:

Լենինգրադի ճակատամարտը

2011թ. ՀՀ ԳԱԱ "Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Կ. Ա. Հարությունյանի՝ «Участие сынов армянского народа в героической

---

[1] **Կ. Ա. Հարությունյան**, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ.), Ե., "Զանգակ-97» հրատ., 2002,էջ 126:

обороне Ленинграда (10 июля 1941г. – 9 августа 1944г.)» մենագրությունը (ռուսերեն)[1], որտեղ նորահայտ արխիվային փաստերի հիման վրա հանգամանորեն լուսաբանվել են Լենինգրադի համար մարտնչած հայ ռազմիկների կատարած սխրանքները: Լենինգրադի և Մերձբալթիկայի երկրակամարում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման է արժանացել լեգենդար ծավակալ օդաչու Նելսոն Գևորգի Ստեփանյանը: Հերոս-քաղաքի մատույցներում տեղի ունեցած մարտերում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել նաև օդաչու Լազար Սերգեյի Չափաչախովը և տանկիստ Ալեքսանդր Սիդորի Մնացականովը: Լենինգրադի հերոսական պաշտպանների թվում էին 42-րդ բանակի ռազմական խորհդի անդամ, գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանը, որը զոհվեց մարտերից մեկում, Լենինգրադյան ռազմաճակատի 1-ին առանձին գումարտակի կոմիսար Հայկ Հովհաննեսի Մելքոնյանը, որը 1943 թ. հունվարի 18-ին, երբ ճեղքվեց Լենինգրադի պաշարումը և կազմվեց պատմական ակտը՝ այդ մասին, առաջինը ստորագրեց այդ փաստաթղթի տակ: Հեղինակը նոր արխիվային տվյալներ է բերում Լենինգրադ-Մոսկվա Հոկտեմբերյան երկաթուղու պետ Բորիս Կոնստանտինի Սալամբեկովի և Լենինգրադի ռազմաճակատի թիվ 3 կամրջաշինարարական գլխավոր գնացքի պետ Նիկոլայ Արտեմի Նարինյանի մասին, որոնք կարևոր դեր խաղացին պաշարման մասնակի ճեղքումից հետո Մեծ երկրի և Լենինգրադի միջև կարճ ժամանակաընթացքում երկաթուղային հաղորդակցության հաստատելու գործում և 1943 թ. նոյեմբերի 5-ին արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Հետաքրքիր փաստեր են բերված Կարմրադրոշ Բալթյան նավատորմում ծառայած հայ ծովայինների ու ծովային օդաչուների մասին: Մասնավորապես հիշատակության է արժանի նավատորմի գլխավոր հրետանավոր, 1-ին կարգի կապիտան Արտավազդ Արամի Սագոյանի անունը, որը հետագայում արժանացավ դեր-ծովակալի կոչման:

Կ. Ա. Հարությունյանը առաջին անգամ հայ պատմագրության մեջ ընթերցողին է ներկայացնում Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, ՀամԿ (բ/Կ. Կենտկոմի քաղբյուրոյի անդամ ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, արտաքին առևտրի ժողկոմ) Անաստաս Իվա-

---

[1] **К. А. Арутюнян**, Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда (10 июля 1941 г. – 9 августа 1944 г.), 172с.

նի Միկոյանի կարևոր դերը Լենինգրադի պաշարման առաջին շրջանի ծանր օրերին Հերոս-քաղաքի բնակիչներին և պաշտպաններին սննդամթերքով ապահովելու գործում, որի համար նա ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թ. սեպտեմբերի 30-ի հրամանագրով արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման[1]:

Նորահայտ փաստերի հիման վրա Կ. Ա. Հարությունյանը բացահայտել է նաև ԽՍՀՄ Հյուսիսարևմտյան ռազմավարական ուղղության ռազմական խորհրդի անդամ, ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի առաջին տեղակալ, նավատորմի գլխավոր շտաբի պետ ծովակալ Իվան Ստեփանի Իսակովի դերը պատերազմի առաջին օրերի ծանր շրջանում Բալթյան կարմրադրոշ նավատորմի հիմնական ուժերը Տալլինից Լենինգրադ (Կրոնշտադտ) տեղափոխելու, Լենինգրադ քաղաքի ծովային պաշտպանությունը կազմակերպելու, Լադոգա, Օնեգա և Չուդ լճերի նավատորմիղների ստեղծման, Լադոգա լճի վրայով “կյանքի ճանապարհի» բացման գործում և այլն: Առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվել է Լենինգրադյան ռազմաճակատի 311-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ (հետագայում գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) Բորիս Ալեքսանդրի Վլադիմիրովի (ծնվել է Ալեքսանդրապոլում, այժմ՝ Գյումրի, մայրը հայ էր) գործունեությունը Լենինգրադի պաշտպանության ժամանակ: Առաջին անգամ լուսաբանվել է նաև ինժեներական զորքերի ապագա մարշալ Սերգեյ Քրիստափորի Ագանովի, հրետանու ապագա գեներալ-լեյտենանտ Պյոտր Անտոնի Չունչուզովի մասնակցությունը Հերոս-քաղաքի պաշտպանական և հարձակողական մարտերին և այլն:

Գրքի վերջում բերված հավելվածում հեղինակը տվել է Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ զոհված հայ ռազմիկների ցուցակը:

Կուրսկի ճակատամարտը

2014 թ. Կլիմենտ Հարությունյանը հրատարակել է «Участие сынов армянского народа в Курской битве (5 июля – 23 августа 1943г.)» աշխատությունը (ռուսերեն)[2]: Նորահայտ արխիվային փաստերի հիման վրա

---

[1] **К.А. Арутюнян**, Участие сынов армянского народа в героической обороне Ленинграда, с.52.

[2] **К. А. Арутюнян**, Участие сынов армянского народа в Курской битве (5 июля - 23 августа 1943г.), Е., Изд. «Зангак», 2014, 176стр.:

հեղինակը առաջին անգամ հայ պատմագրության մեջ անդրադարձել է Հայրենական մեծ պատերազմի ընթացքում արմատական բեկում մտցրած պատմական այդ խոշորագույն ճակատամարտին հայերի մասնակցության հիմնահարցին: Գրքում հեղինակը հատուկ տեղ է հատկացրել Արևմտյան ռազմաճակատի 11-րդ գվարդիական բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Իվան Քրստափորի Բաղրամյանի գործունեությանը, որը հատկապես աչքի է ընկել Օրյոլյան գործողության ժամանակ, պարգևատրվել Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով, արժանացել գեներալ-գնդապետի կոչման: Կուրսկի ճակատամարտի մասնակից հրաձգային դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Իոնոսյանը և 11-րդ գվարդիական առանձին տանկային բրիգադի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Շահումի Կալուստովը (Գալստյան) արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Կուրսկի ճակատամարտի օրերին Վորոնեժյան և Տափաստանային ռազմաճակատների ռազմաօդային ուժերի գործողություններն էր ղեկավարում Զորակայանի ներկայացուցիչ, Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը (Արմենակ Արտեմի Խանփերյանցը), որն արժանացավ ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման և պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով[1]:

Կուրսկի ճակատամարտում աչքի ընկած հայորդի զորահրամանատարներից էին՝ 3-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ (հետագայում Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ) Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը, 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր (հետագայում գեներալ-լեյտենանտ) Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը, 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը (հետագյում երեքին էլ շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում), 44-րդ առանձին թնդանոթա-հրաձգային ծանր բրիգադի հրամանատար, գնդապետ Ռաֆայել Անտոնի Հայրապետյանը, 245-րդ առանձին տանկային գնդի հրամանատար, փոխգնդապետ Մաթևոս Կիրակոսի Հակո-

[1] Նույն տեղում, էջ 113 (1944թ. օգոստոսի 19-ին Ս.Ա. Խուդյակովին շնորհվեց ավիացիայի մարշալի կոչում):

բյանը, 18-րդ օդադեսանտային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Զաքար Թադևոսի Դերձյանը, 10-րդ օդադեսանտային գնդի հրամանատար, գվարդիայի մայոր Արշակ Ծատուրի Տեր-Զաքարյանը, մայոր Աշոտ Գրիգորի Ալեքյանը և շատ ուրիշներ:

Կ. Ա. Հարությունյանը համառոտակի լուսաբանել է նաև Կուրսկի ճակատամարտում 51-րդ գվարդիական հրաձգային (նախկին Հայկական 76-րդ լեռնահրաձգային) դիվիզիայի մարտական գործողությունները, վերհանել հայ գվարդիականների սխրագործությունները:

Նորահայտ արխիվային փաստերի հիման վրա հեղինակը բացահայտել է Կուրսկի ճակատամարտին 1-ին, 2-րդ, 5-րդ, 15-րդ, 16-րդ օդային բանակների և Հեռահար գործողության ավիացիայի շարքերում մասնակցած հայ օդաչուների, 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ տանկային բանակների կազմում մարտնչած հայ տանկիստների սխրանքները:

Մոսկվայի ճակատամարտը

Պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը առաջին անգամ հայ պատմագիտության մեջ աշխատություն է գրել Մոսկվայի ճակատամարտին հայ ժողովրդի զավակների մասնակցության մասին[1]:

Գիրքը գրված է հիմնականում ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերի հիման վրա և ամբողջովին նորություն է հայ պատմագիտության մեջ: Աշխատությունը գրված է ռուսերեն, որը ավելի է ընդլայնում ընթերցողների շրջանակը, բարձրացնում նրա ճանաչողական արժեքը:

Աշխատության մեջ Կ. Ա. Հարությունյանը հանգամանորեն տալիս է 1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942թ. ապրիլի 20-ը տեղի ունեցած Մոսկվայի ճակատամարտի ընդհանուր պատկերը և այդ ֆոնի վրա լուսաբանում հայ ռազմիկների կատարած սխրանքները, բացահայտում խորհրդային պետական ականավոր հայ գործիչների, գիտնականների, ռազմարդյունաբերության կազմակերպիչների ծանրակշիռ ավանդը Մոսկվայի ճակատամարտում տարած հաղթանակի գործում: Մոսկվայի պաշտպանության ակտիվ մասնակիցների թվում էին՝ Հարավարևմտյան

---

[1] **К. А. Арутюнян**, Участие сынов армянского народа в битве под Москвой (30 сентября 1941г. – 20 апреля 1942г.), Е.: Изд. «Зангак», 2015, 224 с.

ռազմաճակատի աջ թևի զորախմբի շտաբի պետ գեներալ-մայոր (հետագայում Խորհրդային Միության մարշալ) Իվան Քրիստափորի Բաղրամյանը, Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար, ավիացիայի գեներալ-մայոր (հետագայում ավիացիայի մարշալ) Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը (Արմենակ Արտեմի Խանփերյանցը), Հարավարևմտյան ռազմաճակատի հրետանու պետ հրետանու գեներալ-լեյտենանտ (հետագայում գեներալ-գնդապետ), Խորհրդային Միության հերոս Միքայել Արտեմի Պարսեղովը, նրա տեղակալ հրետանու գեներալ-մայոր (հետագայում հրետանու գեներալ-լեյտենանտ) Իվան Դավթի Վեքիլովը, Կալինինի ռազմաճակատի սանիտարական վարչության պետ բժշկական ծառայության գեներալ-մայոր (հետագայում բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ավետիք Իգնատի Բուռնազյանը, Արևմտյան ռազմաճակատի քաղաքական վարչության պետ, բրիգադային կոմիսար (հետագայում գեներալ-լեյտենանտ) Սերգեյ Թեոդորոսի Գալաջևը, Արևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գնդապետ (հետագայում գեներալ-լեյտենանտ) Ստեփան Իլյայի Կինոսյանը, Կալինինի ռազմաճակատի 2-րդ գվարդիայի հրաձգային կորպուսի կոմիսար, դիվիզիոնային կոմիսար (հետագայում գեներալ-լեյտենանտ) Հայկ Լազարի Թումանյանը, Մոսկվայի թիվ 8 ռազմաշինարարական վարչության պետ, ինժեներ-գնդապետ (հետագայում ինժեներական զորքերի գեներալ-գնդապետ) Ալեքսանդր Գաբրիելի Կարաօղլանովը, ՀՕՊ-ի զորքերի զենիթային հրետանու հրաձգամարտավարական վարչության պետ, գնդապետ (հետագայում հրետանու գեներալ-մայոր) Հովհաննես Սեդրակի Հովանօղլյանը և շատ ուրիշներ: Գրքում լայն տեղ են հատկացված Մոսկվայի ճակատամարտի քաջարի զորահրամանատարներ՝ 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ (հետագայում գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանի, 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանի, 49-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար, գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Տիմոֆեյ Վլադիմիրի Դեդեօղլյանի, 38-րդ հրաձգային բրիգադի հրամանատար, գնդապետ Սմբատ Մելիքի Դանիելյանի, գնդերի հրամանատարներ՝ Ներսես Փարսիի Բալոյանի, Արսեն Մարկոսի Ավթանդիլյանի (հետագայում գեներալ-մայոր), Համբարձում Մելիքի Մելիքյանի, Ռաֆայել Անտոնի Հայրապետյանի, Տիգրան Սահակի Գյուբուդաղյանի, Հայկ Ղազարյանի

կատարած սխրանքներին: Առաջին անգամ հայ պատմագրության մեջ լուսաբանվել է Արևմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի 28-րդ տանկային բրիգադի տանկային գումարտակի հրամանատար, մայոր Գաբրիել Հովհաննեսի Սահրադյանի անօրինակ սխրանքը: Մոսկվայի մարզի Նովո-Պետրովսկի շրջանի Սկիրմանով գյուղի շրջանում 1941 թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած մարտում նրա գումարտակը ոչնչացրեց հակառակորդի 18 տանկ, հրաձգային 4 մարտկոց, 2 վաշտից ավելի զինվոր ու սպա: Մարտի վերջում խիզախ տանկիստ հրամանատարը զոհվեց քաջի մահով: Արևմտյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ (հետագայում Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության քառակի հերոս) Գ. Կ. Ժուկովի 1942 թ. հունվարի 12-ի թիվ 044 հրամանով մայոր Գաբրիել Սահրադյանը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով[1]:

Ռազմաճակատի հրամանատարի 1942 թ. փետրվարի 10-ի թիվ 0157 հրամանով Լենինի շքանշանով պարգևատրվեց նաև 43-րդ բանակի առանձին հրաձգային գնդի 3-րդ գումարտակի 9-րդ վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Գևորգ Վլադիմիրի Պարսեղովը, որի ստորաբաժանումը 1941 թ. դեկտեմբերի 22-28-ը Մոսկվայի մարզի Բալաբանովո, Վորոբյի և Օկատովա բնակավայրերի ազատագրման մարտերում ոչնչացրեց հակառակորդի ավելիք քան 200 զինվոր ու սպա, մի քանի կրակակետ, ավար վերցրեց 143 գնդացիր, 20 ավտոմեքենա, 2 ականանետ, 56 ձի և այլն: Խիզախ հրամանատարը անձամբ ոչնչացրեց գերմանական 19-րդ գնդի հրամանատարին[2]:

Կ. Ա. Հարությունյանի գրքում առաջին անգամ հայ պատմագրության մեջ հետաքրքիր փաստեր են բերված միջուկային և ջրածնային ռումբի հիմնադիրներից մեկի, Սոցիալիստական աշխատանքի եռակի հերոս Կիրիլ Իվանովիչ Շոլկինի (Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանի) ռազմաճակատային կյանքից: 1941 թ. հուլիսի 7-ից մինչև 1942 թ. հունվարի 6-ը կարմիրբանակային Կ. Ի. Շոլկինը մարտնչել է սկզբում Սմոլենսկի, ապա Մոսկվայի մատույցներում, պարգևատրվել “Մոսկվայի պաշտպանության համար» մեդալով[3]:

1941-1942 թթ. Մոսկվայի հակաօդային պաշտպանությունն է իրակա-

---

[1] Նույն տեղում, էջ 97:

[2] Նույն տեղում.

[3] Նույն տեղում,էջ 131:

նացրել ավիակոնստուկտոր Արտեմ Իվանի Միկոյանի ստեղծած “ՄԻԳ-3» կործանիչ ինքնաթիռների գունդը: Մոսկվայի պաշտպանության ծանր օրերին Ա. Ի. Միկոյանի կոնստուկտորական բյուրոն գտնվում էր մայրաքաղաքում... Հետագայում Ա. Ի. Միկոյանին շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի, ինժեներա-տեխնիկական ծառայության գեներալ-գնդապետի և ակադեմիկոսի կոչում:

Ըստ Կ. Ա. Հարությունյանի, Մոսկվայի ճակատամարտի օրերին մայրաքաղաքում էր գործում Համամիութենական էլեկտրոտեխնիկական ինստիտուտի փորձնական գործարանը, որի տնօրենն էր տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրանիկ Ղևոնդի Իոսիֆյանը: Գործարանում պատրաստված տանկեր և դզոտներ ոչնչացնող տորպեդները, ռադիոկայանների սնուցման մարտկոցները, նոր սերնդի դյուրակիր շարժական ռադիոկայանները, պարտիզաններիի համար ստեղծած հատուկ պայթուցիկ սարքերը, մագնիսական ավանները շատ բանով նպաստեցին ճակատամարտում տարած հաղթանակին:

Գրքի վերջաբանում հեղինակը համառոտ ակնարկ է տալիս Ռուսաստանում և մասնավորապես Մոսկվայում հայերի վաղ ժամանակներից ապրելու և գործելու մասին, նշում ռազմական, պետական, գիտական, մշակույթի և այլ կարևոր բնագավառների մոսկովաբնակ նշանավոր հայ գործիչների անունները: Հավելվածում տեղ են գտել Մոսկվայի ճակատամարտում զոհված հայ ռազմիկների ազգանուններ, հնարավորին չափ ճշտվել նրանց զոհվելու ժամանակը և թաղման վայրը:

Այսպիսով, ամփոփելով 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի Լենինգրադի, Կուրսկի և Մոսկվայի ճակատամարտերին հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցի ուսումնասիրության ասպարեզում հայ պատմաբանների կատարած աշխատանքը, գալիս ենք այն եզրահանգման, որ առ այսօր նրանք զգալի գործ են կատարել այդ թեմայի գիտական ուսումնասիրության ասպարեզում: Տարիների ընթացքում հայ պատմաբաններն այդ թեմային անդրադարձել են իրենց զանազան աշխատություններում հատուկ ուշադրություն դարձրել Լենինգրադի, Կուրսկի, Մոսկվայի ճակատամարտերին մասնակցած հայ ռազմիկների սխրանքների վերհանմանը: Դրա հետ մեկտեղ, հայ պատմաբանները դեռևս անելիքներ ունեն այդ ասպարեզում: Առ այսօր հատուկ ուսումնասիրություն չի կատարվել ֆաշիստական զավթիչներից Ուկրաինայի ազատագրման ժամանակ իրականացված մարտական գործողություններ-

րին հայ ռազմիկների մասնակցության վերաբերյալ: Այդ ամենը կնպաստի Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցի ամբողջական ուսումնասիրությանը, հիմնահարց, որն այսօր հիրավի հանդիսանում է Հայոց պատմության նորագույն շրջանի արդիական կարևոր խնդիրներից մեկը և մեծ չափով ազդեցություն կունենա ինչպես մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, այնպես էլ Հայաստանի և Արցախի հանրապետությունների զինված ուժերի անձնակազմերի մարտական, բարոյական ոգու բարձրացման գործին:

Բանալի բառեր: *Լենինգրադի, Կուրսկ, Մոսկվա, պատերազմ, ռազմաօդային, մարշալ, Կարմիր բանակ, Փառքի շքանշան, ավիացիա, ճակատամարտ*

ОБЪЯСНЕНИЕ ОСНОВНОГО ВОПРОСА ОБ УЧАСТИИ АРМЯН В ЛЕНИНГРАДСКОЙ, КУРСКОЙ И МОСКОВСКОЙ БИТВАХ В АРМЯНСКОЙ ИСТОРИИ

Володя Гаспарян

Ключевые слова*. Ленинград, Курск, Москва, Война, ВВС, Маршал, Красная Армия, Орден Славы, Авиация, Битва*

Дети армянского народа отличились своими подвигами и тактическими способностями на всех фронтах, способствовали разгрому немецко-фашистских захватчиков. В этом смысле армянская историография всегда акцентирует внимание на теме освещения вклада армянского народа в победу в Великой Отечественной войне, в частности участия армянских воинов в сражениях.

Хотя до сегодняшнего дня армянские историки проделали значительную и благодарную работу в этом направлении, в частности, в отдельных работах они освещали вопрос героической обороны Ленинграда, участия армян в битвах под Москвой и Курском, однако работы в этой области еще достаточно. Все это будет способствовать всестороннему изучению вопроса участия армянского народа в Великой Отечественной войне, вопроса, который поистине является одним из важнейших вопросов новейшего периода армянской истории. Новое и полное снятие этого вопроса окажет большое влияние на военно-патриотическое воспитание подрастающего поколения, а также на повышение боевого и морального

духа личного состава вооруженных сил Республики Армения и Арцаха, на укрепление и развитие армяно-российских стратегических отношений.

EXPLANATION OF THE BASIC QUESTION OF THE ARMENIAN PARTICIPATION IN THE BATTLES OF LENINGRAD, KURSK AND MOSCOW IN ARMENIAN HISTORY

Volodya Gasparyan

Key words. *Leningrad, Kursk, Moscow, War, Air Force, Marshal, Red Army, Order of Glory, Aviation, Battle*

The children of the Armenian people stood out with their feats and tactical abilities on all fronts, contributed to the defeat of the German-fascist invaders. In that sense, Armenian historiography always focuses on the topic of coverage of the contribution of the Armenian people to the victory in the Great Patriotic War, particularly the participation of Armenian warriors in the battles.

Although until today, Armenian historians have done a significant and grateful work in this direction, in particular, in separate works, they covered the issue of the heroic defense of Leningrad, the participation of Armenians in the battles of Moscow and Kursk, however, there is still enough work to be done in that field. All of that will contribute to the complete study of the issue of the Armenian people's participation in the Great Patriotic War, an issue that is truly one of the most important issues of the modern period of Armenian history. The new and complete lifting of that issue will have a great impact on the military-patriotic education of the young generation, as well as on raising the fighting and moral spirit of the armed forces personnel of the Republics of Armenia and Artsakh, and on the strengthening and development of Armenian-Russian strategic relations.

Վոլոդյա Գասպարյան *- Մանկ.գ.թ., ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական աշխատող*

Гаспарян Володя *- кандидат педагогических наук, научный сотрудник в институте арменоведческих исследований ЕГУ.*

Gasparyan Volodya *- candidate of pedagogical sciences, scientific workerat theInstitute of Armenian studiesof YSU*

094 000 780, gavolodya@yahoo.com